# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N «ԴԴ-ԳՀԾՁԲ-18/06»

ք. Երևան «03» «07» 2018 թ.

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Բաղդասարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **3 820 000 (երեք միլիոն ութ հարյուր քսան հազար)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 28-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի, քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **14** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

***«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊՀՀ***

Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5

Հ/Հ՝ 900011192151

ՀՎՀՀ՝ 02583241

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

***«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ***

Հասցե՝ ք. Երևան, Մյասնիկյան 22/4

Հ/Հ՝ 220083335012000

ՀՎՀՀ՝ 08417829

«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Վ. Բաղդասարյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 1
«03» «07» 2018 թ. կնքված
«ԴԴ ԳՀԾՁԲ-18/06» ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | | | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | բնութագիրը | առավելագույն քանակը | մատուցման միավորի գինը /ՀՀ դրամ/ | | | | հասցեն | ժամկետը** |
| 1 | 50111130/11 | **HYUNDAI 1.6 մակնիշի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ** | | | դրամ | 1 170 000 | 1 | ք. Երևան | պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018թ դեկտեմբերի 25 ը ներառյալ |
| | | Առջևի հարվածամեղմիչ/կոմպլեկտ/ | 4 | 32 000 | | | | | |
| | | Հետևի հարվածամեղմիչ/կոմպլեկտ/ | 4 | 28 000 | | | | | |
| | | Օդի զտիչի փոխում. ներառյալ օդի զտիչը | 9 | 6 000 | | | | | |
| | | Վառելիքի զտիչի փոխում. ներառյալ վառելիքի զտիչը | 9 | 6 000 | | | | | |
| | | Օդորակիչի զտիչի փոխում. ներառյալ օդորակիչի զտիչը | 5 | 6 000 | | | | | |
| | | Կայունարարի վռան | 12 | 3 500 | | | | | |
| | | Կայունարարի կանգնակ | 12 | 9 000 | | | | | |
| | | Բոնիչ | 8 | 3 000 | | | | | |
| | | Բաշխիչ լիսեռի տափիչ | 1 | 18 000 | | | | | |
| | | Ղեկի ծայրակալ | 12 | 9 000 | | | | | |
| | | Ղեկի կալոնակի վերանորոգում | 5 | 9 000 | | | | | |
| | | Առջևի արգելակման կոճղակի փոխում. ներառյալ արգելակման կոճղակները/կոմպլեկտ/ | 9 | 23 000 | | | | | |
| | | Հետևի արգելակման կոճղակի փոխում. ներառյալ արգելակման կոճղակները/կոմպլեկտ/ | 9 | 20 000 | | | | | |
| | | Վառոցքի մոմերի փոխում. ներառյալ վառոցքի մոմերը/կոմպլեկտ/ | 4 | 15 000 | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | 50111130/3 | **HYUNDAI 1.8 մակնիշի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ** | | | դրամ | 1 170 000 | 1 | ք. Երևան | պայմանագիր ն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018թ. դեկտեմբերի 25-ը ներառյալ |
| | | Առջևի հարվածամեղմիչ/կոմպլեկտ/ | 4 | 32 000 | | | | | |
| | | Հետևի հարվածամեղմիչ/կոմպլեկտ/ | 4 | 28 000 | | | | | |
| | | Օդի զտիչի փոխում, ներառյալ օդի զտիչը | 9 | 6 000 | | | | | |
| | | Վառելիքի զտիչի փոխում, ներառյալ վառելիքի զտիչը | 9 | 6 000 | | | | | |
| | | Օդորակիչի զտիչի փոխում, ներառյալ օդորակիչի զտիչը | 5 | 6 000 | | | | | |
| | | Կայունարարի վռան | 12 | 3 500 | | | | | |
| | | Կայունարարի կանգնակ | 12 | 9 000 | | | | | |
| | | Բռնիչ | 8 | 3 000 | | | | | |
| | | Բաշխիչ լիսեռի տվիչ | 1 | 18 000 | | | | | |
| | | Ղեկի ծայրակալ | 12 | 9 000 | | | | | |
| | | Ղեկի կալոնակի վերանորոգում | 5 | 9 000 | | | | | |
| | | Առջևի արգելակման կոճղակի փոխում, ներառյալ արգելակման կոճղակները/կոմպլեկտ/ | 9 | 23 000 | | | | | |
| | | Հետևի արգելակման կոճղակի փոխում, ներառյալ արգելակման կոճղակները/կոմպլեկտ/ | 9 | 20 000 | | | | | |
| | | Վառոցքի մոմերի փոխում, ներառյալ վառոցքի մոմերը/կոմպլեկտ/ | 4 | 15 000 | | | | | |
| 3 | 50111130/12 | **ԳԱԶ 31-10 մակնիշի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ: Մեքենայի շարժիչի աշխատանքային ծավալը՝** 2.4լ. | | | դրամ | 260 000 | 1 | ք. Երևան | պայմանագիր ն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018թ. դեկտեմբերի 25 ը ներառյալ |
| | | Առջևի արգելակման կոճղակի փոխում, ներառյալ արգելակման կոճղակները /կոմպլեկտ/ | 2 | 9 000 | | | | | |
| | | Հետևի արգելակման կոճղակի փոխում, ներառյալ արգելակման կոճղակները /կոմպլեկտ/ | 2 | 12 000 | | | | | |
| | | Օդի զտիչի փոխում, ներառյալ օդի զտիչը | 2 | 3 500 | | | | | |
| | | Վառելիքի զտիչի փոխում, ներառյալ վառելիքի զտիչը | 2 | 4 000 | | | | | |
| | | Վառոցքի մոմերի փոխում, ներառյալ վառոցքի մոմերը /կոմպլեկտ/ | 2 | 5 000 | | | | | |
| | | Առջևի հարվածամեղմիչ/կոմպլեկտ/ | 2 | 22 000 | | | | | |
| | | Ջրի պոմպի փոխարինում, ներառյալ ջրի պոմպը | 2 | 22 000 | | | | | |
| | | Շարժիչի փոկի փոխարինում, ներառյալ շարժիչի փոկը | 2 | 5 000 | | | | | |
| | | Շարժիչի բարձիկի փոխարինում ներառյալ շարժիչի բարձիկը | 4 | 6 000 | | | | | |
| | | Ռեդուկտորի կարգաբերում | 2 | 3 000 | | | | | |
| | | Ղեկի կալոնակի վերանորոգում. | 1 | 10 000 | | | | | |
| | | Մեքենայի խլացուցիչի վերանորոգում, ներառյալ բոլոր անհրաժեշտ պահեստամասերը | 1 | 5 000 | | | | | |
| | | Գործարկիչի/ստարտեր/ փոխում, ներառյալ գործարկիչը | 1 | 50 000 | | | | | |
| 4 | 50111130/13 | **Nissan Pathfinder (ունիվերսալ) մակնիշի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ: Մեքենայի շարժիչի աշխատանքային ծավալը՝** 4.0լ. | | | դրամ | 130 000 | 1 | ք. Երևան | պայմանագիր ն ուժի մեջ մտնելու |
| | | Առջևի հարվածամեղմիչ/կոմպլեկտ/ | 1 | 5 000 | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հետնի հարվածամեղմիչ/կոմպլեկտ/ | 1 | 5 000 | | | | | օրվանից մինչև 2018թ. դեկտեմբերի 25 ը ներառյալ |
| | | Առջևի արգելակման կոճղակի փոխում. ներառյալ արգելակման կոճղակները/կոմպլեկտ/ | 1 | 27 000 | | | | | |
| | | Հետնի արգելակման կոճղակի փոխում. ներառյալ արգելակման կոճղակները/կոմպլեկտ/ | 1 | 24 000 | | | | | |
| | | Օդի զտիչի փոխում. ներառյալ օդի զտիչը | 1 | 9 000 | | | | | |
| | | Օդորակիչի զտիչի փոխում. ներառյալ օդորակիչի զտիչը | 1 | 10 000 | | | | | |
| | | Վառելիքի զտիչի փոխում. ներառյալ վառելիքի զտիչը | 1 | 5 000 | | | | | |
| | | Վառոցքի մոմերի փոխում. ներառյալ վառոցքի մոմերը/կոմլեկտ/ | 1 | 30 000 | | | | | |
| | | Շարժիչի փոկի փոխարինում. ներառյալ շարժիչի փոկը | 1 | 10 000 | | | | | |
| | | Անվաբացքի կարգաբերում | 1 | 5 000 | | | | | |
| 5 | 50111130/4 | **Nissan X-Trail (ունիվերսալ) մակնիշի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ: Մեքենայի շարժիչի աշխատանքային ծավալը՝ 2.0լ.** | | | դրամ | 130 000 | 1 | ք. Երևան | պայմանագիր ն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018թ. դեկտեմբերի 25-ը ներառյալ |
| | | Առջևի հարվածամեղմիչ/կոմպլեկտ/ | 1 | 10 000 | | | | | |
| | | Հետնի հարվածամեղմիչ/կոմպլեկտ/ | 1 | 10 000 | | | | | |
| | | Առջևի արգելակման կոճղակի փոխում. ներառյալ արգելակման կոճղակները/կոմպլեկտ/ | 1 | 28 000 | | | | | |
| | | Հետնի արգելակման կոճղակի փոխում. ներառյալ արգելակման կոճղակները/կոմպլեկտ/ | 1 | 25 000 | | | | | |
| | | Օդի զտիչի փոխում. ներառյալ օդի զտիչը | 1 | 10 000 | | | | | |
| | | Օդորակիչի զտիչի փոխում. ներառյալ օդորակիչի զտիչը | 1 | 10 000 | | | | | |
| | | Վառելիքի զտիչի փոխում. ներառյալ վառելիքի զտիչը | 1 | 10 000 | | | | | |
| | | Վառոցքի մոմերի փոխում. ներառյալ վառոցքի մոմերը/կոմլեկտ/ | 1 | 22 000 | | | | | |
| | | Անվաբացքի կարգաբերում | 1 | 5 000 | | | | | |
| 6 | 50111130/5 | **Toyota Corolla (սեդան) մակնիշի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ: Մեքենայի շարժիչի աշխատանքային ծավալը՝ 1.6լ.** | | | դրամ | 120 000 | 1 | ք. Երևան | պայմանագիր ն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018թ. դեկտեմբերի 25 ը ներառյալ |
| | | Առջևի հարվածամեղմիչ/կոմպլեկտ/ | 1 | 5 000 | | | | | |
| | | Հետնի հարվածամեղմիչ/կոմպլեկտ/ | 1 | 5 000 | | | | | |
| | | Առջևի արգելակման կոճղակի փոխում. ներառյալ արգելակման կոճղակները/կոմպլեկտ/ | 1 | 25 000 | | | | | |
| | | Հետնի արգելակման կոճղակի փոխում. ներառյալ արգելակման կոճղակները/կոմպլեկտ/ | 1 | 24 000 | | | | | |
| | | Օդի զտիչի փոխում. ներառյալ օդի զտիչը | 1 | 8 000 | | | | | |
| | | Օդորակիչի զտիչի փոխում. ներառյալ օդորակիչի զտիչը | 1 | 8 000 | | | | | |
| | | Վառելիքի զտիչի փոխում. ներառյալ վառելիքի զտիչը | 1 | 5 000 | | | | | |
| | | Վառոցքի մոմերի փոխում. ներառյալ վառոցքի մոմերը/կոմպլեկտ/ | 1 | 22 000 | | | | | |
| | | Ինժեկտորի ֆարսունկայի մաքրում | 1 | 12 000 | | | | | |
| | | Անվաբացքի կարգաբերում | 1 | 5 000 | | | | | |
| | | Ռեղուլյատորի կարգաբերում | 1 | 1 000 | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7 | 50111130/16 | **Toyota Camry (սեդան) մակնիշի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ: Մեքենայի շարժիչի աշխատանքային ծավալը՝ 2.5լ.** | | | դրամ | 270 000 | 1 | ք. Երևան | պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018թ. դեկտեմբերի 25-ը ներառյալ |
| | | Առջևի հարվածամեղմիչ/կոմպլեկտ/ | 2 | 1 000 | | | | | |
| | | Հետևի հարվածամեղմիչ/կոմպլեկտ/ | 2 | 1 000 | | | | | |
| | | Առջևի արգելակման կոճղակի փոխում, ներառյալ արգելակման կոճղակները/կոմպլեկտ/ | 2 | 27 000 | | | | | |
| | | Հետևի արգելակման կոճղակի փոխում, ներառյալ արգելակման կոճղակները/կոմպլեկտ/ | 2 | 25 000 | | | | | |
| | | Օդի զտիչի փոխում, ներառյալ օդի զտիչը | 2 | 8 000 | | | | | |
| | | Օդորակիչի զտիչի փոխում, ներառյալ օդորակիչի զտիչը | 2 | 8 000 | | | | | |
| | | Վառելիքի զտիչի փոխում, ներառյալ վառելիքի զտիչը | 2 | 5 000 | | | | | |
| | | Վառոցքի մոմերի փոխում, ներառյալ վառոցքի մոմերը/կոմպլեկտ/ | 2 | 20 000 | | | | | |
| | | Ինժեկտորի ֆարսունկայի մաքրում | 2 | 12 000 | | | | | |
| | | Շարժիչի փոկի փոխարինում, ներառյալ շարժիչի փոկը | 2 | 10 000 | | | | | |
| | | Առջևի կայունարարի կանգնակի փոխարինում, ներառյալ կանգնակը | 2 | 12 000 | | | | | |
| | | Ետևի կախոցի փոխարինում,ներառյալ կախոցը | 2 | 1 000 | | | | | |
| | | Անվաբացքի կարգաբերում | 2 | 5 000 | | | | | |
| 8 | 50111130/6 | **Toyota Camry (սեդան) մակնիշի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ: Մեքենայի շարժիչի աշխատանքային ծավալը՝ 2.4լ.** | | | դրամ | 120 000 | 1 | ք. Երևան | պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018թ. դեկտեմբերի 25-ը ներառյալ |
| | | Առջևի հարվածամեղմիչ/կոմպլեկտ/ | 1 | 5 000 | | | | | |
| | | Հետևի հարվածամեղմիչ/կոմպլեկտ/ | 1 | 5 000 | | | | | |
| | | Առջևի արգելակման կոճղակի փոխում, ներառյալ արգելակման կոճղակները/կոմպլեկտ/ | 1 | 28 000 | | | | | |
| | | Հետևի արգելակման կոճղակի փոխում, ներառյալ արգելակման կոճղակները/կոմպլեկտ/ | 1 | 26 000 | | | | | |
| | | Օդորակիչի զտիչի փոխում, ներառյալ օդորակիչի զտիչը | 1 | 8 000 | | | | | |
| | | Վառոցքի մոմերի փոխում, ներառյալ վառոցքի մոմերը/կոմպլեկտ/ | 1 | 20 000 | | | | | |
| | | Օդի զտիչի փոխում, ներառյալ օդի զտիչը | 1 | 8 000 | | | | | |
| | | Վառելիքի զտիչի փոխում, ներառյալ վառելիքի զտիչը | 1 | 15 000 | | | | | |
| | | Անվաբացքի կարգաբերում | 1 | 5 000 | | | | | |
| 9 | 50111130/7 | **Chevrolet Cruze (սեդան) մակնիշի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ: Մեքենայի շարժիչի աշխատանքային ծավալը՝ 1.6լ.** | | | դրամ | 100 000 | 1 | ք. Երևան | պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018թ. դեկտեմբերի 25-ը ներառյալ |
| | | Առջևի հարվածամեղմիչ/կոմպլեկտ/ | 1 | 10 000 | | | | | |
| | | Հետևի հարվածամեղմիչ/կոմպլեկտ/ | 1 | 10 000 | | | | | |
| | | Օդի զտիչի փոխում, ներառյալ օդի զտիչը | 1 | 10 000 | | | | | |
| | | Օդորակիչի զտիչի փոխում, ներառյալ օդորակիչի զտիչը | 1 | 10 000 | | | | | |
| | | Վառելիքի զտիչի փոխում, ներառյալ վառելիքի զտիչը | 1 | 6 000 | | | | | |
| | | Վառոցքի մոմերի փոխում, ներառյալ վառոցքի մոմերը/կոմպլեկտ/ | 1 | 22 000 | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ինժեկտորի ֆարսունկայի մաքրում | 1 | 12 000 | | | | | |
| | | Շարժիչի փոկի փոխարինում, ներառյալ շարժիչի փոկը | 1 | 15 000 | | | | | |
| | | Անվաբացքի կարգաբերում | 1 | 5 000 | | | | | |
| 10 | 50111130/8 | **KIA Cerato (սեդան) մակնիշի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ: Մեքենայի շարժիչի աշխատանքային ծավալը՝ 1.6լ.** | | | դրամ | 130 000 | 1 | ք. Երևան | պայմանագիր ն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018թ. դեկտեմբերի 25-ը ներառյալ |
| | | Առջևի հարվածամեղմիչ/կոմպլեկտ/ | 1 | 21 000 | | | | | |
| | | Հետևի հարվածամեղմիչ/կոմպլեկտ/ | 1 | 21 000 | | | | | |
| | | Առջևի արգելակման կոճղակի փոխում, ներառյալ արգելակման կոճղակները/կոմպլեկտ/ | 1 | 28 000 | | | | | |
| | | Հետևի արգելակման կոճղակի փոխում, ներառյալ արգելակման կոճղակները/կոմպլեկտ/ | 1 | 25 000 | | | | | |
| | | Օդի զտիչի փոխում, ներառյալ օդի զտիչը | 1 | 8 000 | | | | | |
| | | Օդորակիչի զտիչի փոխում, ներառյալ օդորակիչի զտիչը | 1 | 8 000 | | | | | |
| | | Վառելիքի զտիչի փոխում, ներառյալ վառելիքի զտիչը | 1 | 3 000 | | | | | |
| | | Վառոցքի մոմերի փոխում, ներառյալ վառոցքի մոմերը /կոպլեկտ/ | 1 | 16 000 | | | | | |
| 11 | 50111130/9 | **Օպել Մոկկա 1.8 մակնիշի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ** | | | դրամ | 120 000 | 1 | ք. Երևան | պայմանագիր ն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018թ. դեկտեմբերի 25-ը ներառյալ |
| | | Առջևի հարվածամեղմիչ/կոմպլեկտ/ | 1 | 4 000 | | | | | |
| | | Հետևի հարվածամեղմիչ/կոմպլեկտ/ | 1 | 4 000 | | | | | |
| | | Օդի զտիչի փոխում, ներառյալ օդի զտիչը | 1 | 10 000 | | | | | |
| | | Օդորակիչի զտիչի փոխում, ներառյալ օդորակիչի զտիչը | 1 | 8 000 | | | | | |
| | | Վառոցքի մոմերի փոխում, ներառյալ վառոցքի մոմերը/կոմպլեկտ/ | 1 | 21 000 | | | | | |
| | | Ինժեկտորի ֆարսունկայի մաքրում | 1 | 10 000 | | | | | |
| | | Անվաբացքի կարգաբերում | 1 | 5 000 | | | | | |
| | | Առջևի արգելակման կոճղակի փոխում, ներառյալ արգելակման կոճղակները/կոմպլեկտ/ | 1 | 29 000 | | | | | |
| | | Հետևի արգելակման կոճղակի փոխում, ներառյալ արգելակման կոճղակները/կոմպլեկտ/ | 1 | 29 000 | | | | | |
| 12 | 50111130/10 | **Գազ 330 202-1289 մակնիշի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ** | | | դրամ | 100 000 | 1 | ք. Երևան | պայմանագիր ն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018թ. դեկտեմբերի 25 ը ներառյալ |
| | | Առջևի հարվածամեղմիչ/կոմպլեկտ/ | 8 | 4 125 | | | | | |
| | | Հետևի հարվածամեղմիչ/կոմպլեկտ/ | 1 | 28 000 | | | | | |
| | | Օդի զտիչի փոխում, ներառյալ օդի զտիչը | 1 | 4 000 | | | | | |
| | | Վառոցքի մոմերի փոխում, ներառյալ վառոցքի մոմերը/կոմպլեկտ/ | 1 | 5 000 | | | | | |
| | | Ինժեկտորի ֆարսունկայի մաքրում | 1 | 8 000 | | | | | |
| | | Առջևի արգելակման կոճղակի փոխում, ներառյալ արգելակման կոճղակները/կոմպլեկտ/ | 1 | 8 000 | | | | | |
| | | Հետևի արգելակման կոճղակի փոխում ներառյալ արգելակման կոճղակները/կոմպլեկտ/ | 1 | 13 000 | | | | | |
| | | Ընթացիկ մասերի յուղում | 1 | 1 000 | | | | | |

Պահեստամասերը պետք է լինեն չօգտագործված:

Գնման առարկա հանդիսացող ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունները մատուցվում են Երևան քաղաքում:

Ծառայության մատուցման գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Կատարողը Ծառայությունը մատուցում է Պատվիրատուից ստացած ցուցումների հաջորդ աշխատանքային օրվանից հաշված առավելագույնը 5 աշխատանքային օրվա ընթացքում:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
| --- | --- |
| ***«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ*** | ***«Մ-Բի-Ռ» ՍՊԸ*** |
| Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5 | Հասցե՝ ք. Երևան, Մյասնիկյան 22/4 |
| Հ/Հ՝ 900011192151 | Հ/Հ՝ 220083335012000 |
| ՀՎՀՀ՝ 02583241 | ՀՎՀՀ՝ 08417829 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ |
| Ղեկավար՝ Կ. Փոլադյան | Տնօրեն՝ Վ. Բաղդասարյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված N 2
« 03 » « 07 » 2018 թ. կնքված
«ԴԴ-ԳՀԾՁԲ-18/06» ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | |
| | | | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 50111130/11 | **HYUNDAI 1.6** մակնիշի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ | 702 000 | 702 000 | 702 000 | 1 170 000 | 1 170 000 | 1 170 000 | 1 170 000 |
| 2 | 50111130/3 | **HYUNDAI 1.8** մակնիշի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ | 702 000 | 702 000 | 702 000 | 1 170 000 | 1 170 000 | 1 170 000 | 1 170 000 |
| 3 | 50111130/12 | **ԳԱԶ 31-10** մակնիշի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ: Մեքենայի շարժիչի աշխատանքային ծավալը՝ 2.4լ. | 156 000 | 156 000 | 156 000 | 260 000 | 260 000 | 260 000 | 260 000 |
| 4 | 50111130/13 | **Nissan Pathfinder** (ունիվերսալ) մակնիշի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ: Մեքենայի շարժիչի աշխատանքային ծավալը՝ 4.0լ. | 78 000 | 78 000 | 78 000 | 130 000 | 130 000 | 130 000 | 130 000 |
| 5 | 50111130/4 | **Nissan X-Trail** (ունիվերսալ) մակնիշի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ: Մեքենայի շարժիչի աշխատանքային ծավալը՝ 2.0լ. | 78 000 | 78 000 | 78 000 | 130 000 | 130 000 | 130 000 | 130 000 |
| 6 | 50111130/5 | **Toyota Corolla** (սեդան) մակնիշի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ: Մեքենայի շարժիչի աշխատանքային ծավալը՝ 1.6լ. | 72 000 | 72 000 | 72 000 | 120 000 | 120 000 | 120 000 | 120 000 |
| 7 | 50111130/16 | **Toyota Camry** (սեդան) մակնիշի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ: Մեքենայի շարժիչի աշխատանքային ծավալը՝ 2.5լ. | 162 000 | 162 000 | 162 000 | 270 000 | 270 000 | 270 000 | 270 000 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | 50111130/6 | **Toyota Camry** (սեդան) մակնիշի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ: Մեքենայի շարժիչի աշխատանքային ծավալը՝ 2.4լ. | 72 000 | 72 000 | 72 000 | 120 000 | 120 000 | 120 000 | 120 000 |
| 9 | 50111130/7 | **Chevrolet Cruze** (սեդան) մակնիշի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ: Մեքենայի շարժիչի աշխատանքային ծավալը՝ 1.6լ. | 60 000 | 60 000 | 60 000 | 100 000 | 100 000 | 100 000 | 100 000 |
| 10 | 50111130/8 | **KIA Cerato** (սեդան) մակնիշի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ: Մեքենայի շարժիչի աշխատանքային ծավալը՝ 1.6լ. | 78 000 | 78 000 | 78 000 | 130 000 | 130 000 | 130 000 | 130 000 |
| 11 | 50111130/9 | **Օպել Մոկկա 1.8** մակնիշի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ | 72 000 | 72 000 | 72 000 | 120 000 | 120 000 | 120 000 | 120 000 |
| 12 | 50111130/10 | **Գազ 330 202-1289** մակնիշի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ | 60 000 | 60 000 | 60 000 | 100 000 | 100 000 | 100 000 | 100 000 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
*«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ*
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
Հ/Հ՝ 900011192151
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

[illegible]՝ Կ. Փոլադյան
(ստորագրություն)

**ԿԱՏԱՐՈՂ**
*«Մ-Բի-Ռ» ՍՊԸ*
Հասցե՝ ք. Երևան, Մյասնիկյան 22/4
Հ/Հ՝ 220083335012000
ՀՎՀՀ՝ 08417829
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ [illegible]
(ստորագրություն)

Հավելված 3
« 03 » « 07 » 2018 թ. կնքված
«ԴԴ-ԳՀԾՁԲ-18/06» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

______________________

______________________

գտնվելու վայրը ______________
հհ ______________________
հվհհ ______________________

Պատվիրատու

______________________

______________________

գտնվելու վայրը ______________
հհ______________________
հվհհ______________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _________

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | Մատուցված ծառայությունների | | | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են։

Ծառայությունը հանձնեց

______________________
ստորագրություն

______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

______________________
ստորագրություն

______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*« 03 » « 07 » 2018 թ. կնքված*
*«ՂԴ-ԳՀԾՁԲ-18/06» ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ________________-ի
Պատվիրատուի անունը / Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ________________-ին կնքված N ________________
պայմանագրի կնքման ամսաթիվը / պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

________________
ազգանուն, անուն

________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

________________
ազգանուն, անուն

________________
ստորագրություն